



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 դեկտեմբերի 2018 թվականի N 201-Ա

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հ. Պետրոսյանի անձնական դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկանուշ Պետրոսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2019 թվականի հունվարի 4-ը ներառյալ՝ 12 օր:

2. Հայկանուշ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Ասահիր Ավագյանի վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի դեկտեմբերի 20  
ք. Հրազդան



Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ